

ԾՇԳՐՏՈՒՄ

ՍԵԲԷՈՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՅԻՇԱՏԱԿՈՒԱԾ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍԻՆ

Սեբէոսի Պատմութեան արեւելահայերէն թարգմանութիւնը կատարել են տողերիս հեղինակը եւ լեզուաբան Գ. Խաչատրեանը՝ դեռեւս 2004 թուականին¹: Գիրքը վերատպագրուել է նաեւ 2005 թուականին²: Պատմութեան թարգմանութեան աւարտից յետոյ Գ. Խաչատրեանը կազմել է նաեւ Սեբէոսի համաբարբառը³: Այս գրքերի մասին գրախօսութեամբ 2006ին հանդէս է եկել լեզուաբան Է. Մկրտչեանը⁴:

Սոյն յօդուածի խնդրոյ առարկան Սեբէոսի Պատմութեան մէջ 257 ծանօթագրութեան Տիգրանակերտ տեղանունն սխալի ճշգրտումն է: Յօդուածի արդիականութիւնը Սեբէոսի Պատմութեան մէջ երկու Տիգրանակերտերի վկայութեան հիմնաւորումն

1 ՍԵԲԷՈՍ, Պատմութիւն, ԽԱՉԱՏՐԵԱՆ, Գ. - ԵՂԻՍԱՋԱՐԵԱՆ, Վ., (արեւելահայերէն թրգմ., առաջաբանը եւ ծնթ.), Երեւան 2004: Պատմութեան առաջին գլուխները՝ մինչեւ ԼՅ. գլուխ, արեւելահայերէն է փոխադրել եւ այդ հատուածների ծանօթագրութիւնները կատարել է Վ. Եղիազարեանը, իսկ ԼՅ. գլխից մինչեւ աւարտ՝ Գ. Խաչատրեանը՝ համապատասխանաբար նաեւ ծանօթագրելով:

2 ՍԵԲԷՈՍ, Պատմութիւն, ԽԱՉԱՏՐԵԱՆ, Գ. - ԵՂԻՍԱՋԱՐԵԱՆ, Վ., (արեւելահայերէն թրգմ., առաջաբանը եւ ծնթ.), Երեւան 2005²:

3 Հայկական համարարքառ 17, Սեբէոս, Երեւան 2004: Մենք այն կարծիքին ենք, որ համարարքառի թղթային գոյութիւնը Ի. դարի վերջին համակարգչային հնարաւորութիւնների առկայութեամբ սպառել է իր գոյութեան իրաւունքը, մանաւանդ երբ 1999 թուականին արդէն սկսուել էր կազմուել հայ մատենագրութեան թուանշային գրադարանը՝ տե՛ս <http://www.digilib.am/>:

4 ՄԿՐՏՉԵԱՆ, Է., Սեբէոսի պատմութեան արեւելահայերէն թարգմանութիւնը եւ համարարքառը, ի Լրաբեր հասարակական գիտութիւնների, 2006, թիւ 2, 256-263:

է՝ Արցախի Տիգրանակերտ ավանի եւ Ուտիքում եղած Տիգրանակերտ բնակավայրի: Յօդուածի նպատակը Սերէոսի Պատմութեան մէջ կատարուած 257 ծանօթագրութեան սխալի սրբագրումն է: Յօդուածի հիմքում պատմական եւ մեկնողական մասնագիտական ուղիներն են: Յօդուածի գիտական նորոյթը Սերէոսի Պատմութեան ծանօթագրութիւններում Տիգրանակերտ բառայօդուածի սխալի հերքումը եւ յիշատակուած երկու Տիգրանակերտերի ճշգրտումն է:

Սերէոսը Պատմութեան ԼԸ գլխում գրում է. «Պարսից զօրքերը փութով հասան Մրծուից: Լուր տրուեց Հերակլ կայսերը, թէ Խոռեամը եկաւ Մրծուից: <Կայսրը> առաւ իր զօրքերն ու գերիներին եւ վերադառնալով Մարաց անառիկ աշխարհով՝ եկաւ հասաւ Փայտակարան: Լուր տրուեց Խոսրովին, թէ Հերակլը վերադարձաւ, հասաւ Փայտակարան եւ կամենում է Ադուանքով անցնել Վրաստան: Հրաման տուեց իր զօրավար Շահր Վարազին, որ <նրա> անապարհը փակի: Եւ նա փութով հասաւ Այրարատ, անցաւ Գարդմանք՝ նրա դէմ, եւ բանակեց միւս Տիգրանակերտում՝ նրա յանդիման: Իսկ Շահէնը երեսուն հազարով հասաւ բանակեց Հերակլի թիկունքում՝ Տիգրանակերտ ավանում: Սրանք այստեղ էին բանակ դրել, նրանք՝ այնտեղ, իսկ Հերակլը բանակեց նրանց երկուսի միջեւ:

Երբ Հերակլը տեսաւ, որ շրջապատեցին իրեն, շրջուեց դէպի այն զօրքը, որ թիկունքում էր: Հապնեալ, զօրութեամբ զարկեց նրան, խորտակեց ու գնաց Ծղուկով եւ լեռնակողմով իջաւ-լցուեց Նախնաւանի դաշտը անեռ ժամանակ»⁵:

Ինչպէս ակնյայտ է Սերէոսի բնագրից, Հերակլի զօրքը Մարաց աշխարհից ետ է գալիս դէպի Փայտակարան եւ նպատակ ունի Ադուանքով անցնել Վրաստան: Փայտակարանից դէպի Վրաստան՝ ճանապարհը պիտի անցնէր Ուտիքով, ուստի պարսից թագաւորի Շահր Վարազ զօրավարը Այրարատով գալիս է դէպի նապարհը՝ միւս Տիգրանակերտ եւ փակում Հերակլի զօրքի ճաֳարդմանք՝ միւս Տիգրանակերտ եւ փակում Հերակլի զօրքի ճաֳարդմանքը: Պարսից թագաւորի միւս զօրավարը՝ Շահէնը, գալիս, բանակում է Հերակլի թիկունքում՝ Տիգրանակերտ ավանում: Ստացուում է, որ Հերակլը շրջափակուում է. հիւսիսում՝ Գարդմանքում, Շահր Վարազն է, արեւելքում՝ Կասպից ծովն է, համարում, Շահր Վարազն է, արեւելքում՝ Կասպից ծովն է, համարում,

5 ՍԵՐԷՈՍ, Պատմութիւն, նշ. աշխտ., գլ. ԼԸ.:

րաւում՝ Պարսկաստանը, որտեղից նահանջել է Հերակլի զօրքը, արեւմուտքում՝ Շահէն զօրավարը՝ Արցախի Տիգրանակերտում: Զօրաբանակով Վրաստան շարժուող Հերակլը շրջում է դէպի իր թիկունքում՝ հարաւ-արեւմուտքում բանակած Շահէն զօրավարի զօրքը եւ Ծղուկով (Միւնիքով) իջնում է Նախիջեւանի դաշտ:

Այս տեքստում ակնյայտ է, որ «միւս Տիգրանակերտը» Ուտիքի Տիգրանակերտն է, որտեղ բանակ էր դրել Շահն Վարազը, իսկ Փայտակարանում բանակած Հերակլի թիկունքում գտնուող Շահէն զօրավարը բնականաբար բանակել էր Արցախի Տիգրանակերտում: Սերեոսի հաղորդումից էլ պարզում է, որ Արցախի Տիգրանակերտ աւանից քացի եղել է մի ուրիշ Տիգրանակերտ, որն Ուտիքում է:

Անտեսելով այս ամէնը՝ Սեբէոսի պատմութեան արեւելահայերէն փոխադրութեան մէջ ծանօթագրել ենք, թէ յիշեալ Տիգրանակերտը յայտնի մայրաքաղաքն է. «257. Տիգրանակերտ (Նիկոփոք, Մարտիր(ոս)ուպօլիս) – Հայաստանի մայրաքաղաքներից մէկն է: Հիմնադրել է Տիգրան Մեծը մ.թ.ա. 70ականներին: Ունէր հաստաքեստ եւ բարձր պարիսպներ, որոնցում գետեղուած էին ախոռներն ու պահեստները: Այժմ հիմնիվեր աւերուած է»⁶:

Մինչդեռ հարկ էր նկատել, որ խօսքն այստեղ ոչ թէ Մեծ Հայքի Աղձնիք գաւառի Նիրկերտ գաւառում գտնուող Տիգրանակերտ քաղաքի մասին է, այլ Արցախի Տիգրանակերտ աւանի եւ միւս՝ Ուտիքում գտնուող Տիգրանակերտի:

Նշենք, որ Սեբէոսի Պատմութեան առաջին՝ 1851ի թ. Միհրդատեանի կազմած բնագրում⁷, 1879ի Ք. Պատկանեանի կազմած տպագրում⁸, որն արտատպուել է նաեւ 1913ին⁹, ինչպէս նաեւ 1939ին Ստ. Մալխասեանցի կազմած բնագրում¹⁰ չկայ որեւէ ծանօթագրութիւն Տիգրանակերտի մասին:

6 Անդ, 349:
7 ՄԻՀՐԴԱՏԵԱՆ, Թ., (հրտ.), Պատմութիւն Սերեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Կ. Պօլիս 1851:
8 ՊԱՏԿԱՆԵԱՆ, Ք., (հրտ.) Պատմութիւն Սերեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Ս. Պետերբուրգ 1879:
9 Պատմութիւն Սերեոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Թիֆլիս 1913:
10 ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, Ս., Սերեոսի եպիսկոպոսի Պատմութիւն, Երևան 1939:

Սակայն Գ. Աբգարեանը 1979ին իր կազմած բնագրի ծանօթագրութիւնների մէջ նշել է, որ թիւ 2935 ձեռագրի լուսանցքում «հաւանաբար, Հասան Զալալեանի կողմից Տիգրանակերտի կապակցութեամբ ծանօթագրուած է: «Աւերակ այս Տիգրանակերտի անկանի ի գլուխ սահմանաց Ուտի մահանգի ի ներքոյ Շուշի քաղաքի, որ այժմ ասի ի ռամկաց թնգունակերտ, իսկ ի տանկաց՝ թառնագիւտ»¹¹: Նկատենք, որ Գ. Աբգարեանը եւս չի նշել, որ խօսքն այստեղ երկու Տիգրանակերտի մասին է:

Հայոց Արեւելից կողմանց Տիգրանակերտների մասին պահպանուել է ոչ միայն Սեբէոսի յիշատակութիւնը, այլ նաեւ Մովսէս Դասխուրանցու, որ Աղուանից աշխարհի հոգեւորականների շարքում յիշատակել է «Պետրոս՝ Տկոակերտոյ վանական»¹² անունը: Այս տեղանուն մասին Մովսէս կաղանկատուացու պատմութեան թարգմանութեան մէջ Վարազ Առաքելեանը ծանօթագրել է. «Տկոակերտը Արցախի Տուսուստակ կամ Տիգրանակերտ գաւառն է: Այս Տկոակերտ-Տիգրանակերտը պիտի գտնուէր այժմեան Գառնակեր կամ Բարսում գիւղի տեղում»¹³:

Նկատենք որ Սեբէոսի յիշատակածը գաւառ չէ, այլ՝ ական, իսկ Դասխուրանցու յիշատակածը գաւառ կարող էր լինել, ինչպէս նշել է Վ. Առաքելեանը, սակայն, չգիտես ինչ հիմքով, շարունակել, թէ գաւառը պիտի գտնուի ինչ-որ գիւղի տեղում:

Ի դէպ, Մակար Բարխուդարեանը եւս Արցախում յիշատակել է Տիգրանակերտ գաւառ. «Գաւառն, որ ընկած է կուր գետի եւ խաչեմագետի աջ եւ ձախ ափերի եւ դաշտաբերանի մէջ, ստացած է Տուսխատակ, Տիգրանակերտ, Թառնագիւտ - այժմ՝ Շահ-բուլաղ, անունները»¹⁴:

Այս փաստերի պարագայում ակնյայտ սխալ է եղել Սեբէոսի Պատմութեան մէջ Տիգրանակերտ տեղանունն նման ծանօթագրումը: Զարմանալի է, որ այն չեն նկատել ո՛չ գրքի գրախօս է. Մկրտչեանը, որ ծնունդով Արցախից է, ո՛չ էլ որեւէ այլ

11 Ա.Բ.ՎԱՐԵԱՆ, Գ. Վ., (աշխտ.), Պատմութիւն Սեբէոսի, Երեւան 1979, 292:

12 ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Բ., ԳԼԸ:

13 ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, ԱՌԱՔԵԼԵԱՆ, Վ., (թրգմ. առաջաբանը եւ ծնօթ.), Երեւան 1969, 289:

14 ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, Մ. Եպս., Արցախ, Բագու 1895:

հայագէտ, ուստի սոյն յօդուածով հարկ համարեցինք անձամբ ուղղել այդ սխալը¹⁵:

Նշենք նաեւ, որ Տիգրանակերտ անունով այլ քաղաքների մասին եւս կան բազմաթիւ վկայութիւններ: Մասնաւորապէս Տիգրանակերտ մայրաքաղաքին անդրադարձել է Բ. Յարութիւնեանը¹⁶, նաեւ Յ. Յակոբեանը¹⁷: Վերջինս գրում է. «Տիգրան Մեծը՝ նման հելլենիստական աշխարհի բոլոր յայտնի արքաներին, իր անունով հիմնադրել է նաեւ մի շարք այլ բնակավայրեր, ինչպէս Մեծ Հայքում, այնպէս էլ նրա սահմաններից դուրս: Գրաւոր սկզբնադրիւրներից յայտնի է Տիգրանաւանը Գողթնում (Ptol., V, 12,10), Տիգրանա(ւան)-ը Մարաստանում (Ptol., VI, 2,9), Տիգրանակումեն Լիբանանում (Plin., Nat. Hist., V, 81), Տիգրանակերտ անունով երկու ֆաղաֆներ Արցախում եւ Ուտիքում: Սակայն նրա ֆաղաֆաշինական գործունէութեան պսակը պիտի լինէր Հայաստանի եւ Միջագետքի սահմանին կառուցուող ամենամեծ Տիգրանակերտը (App, Mithr.,84)»¹⁸:

Այս ամենամեծ Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրութեան մասին եւս կան տարբեր ենթադրութիւններ: Ինչպէս կարծում է Յ. Յակոբեանը, «յունահռոմեական գրաւոր աղբիւրների երբեմն խիստ շղարշուած տեղեկութիւնների մէջ տեսնում ենք Ադանիքում՝ ներկայիս Սիլուանի մօտ հիմնադրած եւ Տիգրան Մեծի անունը կրող մի հսկայ ֆաղաֆ, որին իր չափերի ու պատմական կարեւոր դեր ունենալու պատճառով գիտնականները կոչում են մայրաքաղաք: Միեւնոյն ժամանակ, Տիգրանակերտ անունով եւս անուագն երկու ֆաղաֆներ էին գտնում Հայաստանի հարաւային սահմաններին, մէկը՝ ներկայիս Մարդիմի մօտ, միւսը, հաւանաբար, կոմագէնէի ծայր հարաւային կէտում՝ Ջուզմայի տեղում եւ նրա դիմաց, Եփրատի ձախ ափին»¹⁹:

15 Տարիներ առաջ Արցախի Տիգրանակերտի քանգարանին նուիրել եմ Սեբեոսի Պատմութեան քարգմանութիւնը՝ տիտղոսաթերթին կատարելով գրառում այս ծանօթագրութեան սխալի մասին, սակայն տեսնելով, որ որեւէ հայագէտ հանդէս չի գալիս սխալի ճշգրտման մասին, հարկ համարեցի ինքս սրբագրել այն:

16 ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Բ., *Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղադրութեան հարցի շուրջ*, ի Հայկագետան հայագիտական հանդէս, 1994, ԺԳ:

17 ՅԱԿՈԲԵԱՆ, Յ., *Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը*, ի Պատմաբանասիրական հանդէս, 2007, ԹԻ 3, 3-29:

18 Ա.նդ, 23:

19 Ա.նդ, 27:

Հայ մատենագրութեան մէջ Տիգրանակերտ է անուանուել նաեւ Ամիրգ (Դիարբեքեր) քաղաքը. «Տիգրանակերտ Յամիթ է, որ աւի Տիարպաֆիր»²⁰ :

Մեծ Հայքի հարաւում գտնուող Տիգրանակերտ-Ամիրգի մասին պահպանուել է անգամ Պաղտասար Համթեցու բանաստեղծական վկայութիւնը.

Մայրաքաղաք Ամիթ ասի,
Տիգրանակերտ սա անուանի²¹:

Տիգրանակերտն Ամիրգ է անուանել նաեւ Առաքել Դավրիժեցին. «Ապա ելեալ Ջղալօղլին ի Կարնոյ եկեալ ի Տիգրանակերտ, որ է Ամիթ»²², որ կրկնել է նաեւ պատմութեան Ի. գլխում. «Տիգրանակերտ՝ որ է Ամիթ»:

Հարկ է նկատել, որ Աղձնիքի Տիգրանակերտ-Մարտիրոսուպօլիսը եւ Տիգրանակերտ-Ամիրգը տարբեր քաղաքներ են: Ամիրգը Տիգրիսի ափին է, իսկ Մարտիրոսուպօլիսը դրանից մօտ 60 կմ հիւսիս-արեւելք՝ Սասունի լեռների ստորոտում:

Սակայն պէտք է նշենք, որ Սեբէոսի յիշատակած Տիգրանակերտ եւ միւս Տիգրանակերտ տեղանունները բացարձակապէս տարբեր են Մեծ Հայքի հարաւում՝ Աղձնիքում, գտնուող այս Տիգրանակերտներից:

Բացի վերը յիշուած Տիգրանակերտ քաղաքներից ըստ «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան»ի՝ Տիգրանակերտ անունով աւան է եղել Փայտակարանում, նաեւ Արցախում՝ Վանքասարի լեռների շրջանում, նաեւ Նախճաւանում՝ Գողթն գաւառում, նաեւ Ուտիքում՝ Պարտաւից հարաւարեւմուտք²³: Վերջինի մասին յիշեալ բառարանը գրում է. «Բնակավայր Մեծ Հայքի Ուտիք աշխարհում, Պարտաւ քաղաքից հարաւ-արեւմուտք, Գիշ ամրոցից հիւսիս: Հաւանաբար նոյն Տիգրանակերտն է»:

20 ՊԵՐՊԵՐԵԱՆ, Հ., (ԲՆՆ. հրտ.), Աշխարհացոյց վարդաւանյ վարդապետի, Բարիք 1960, 21:

21 ՏԵՆ ՍՍՀԱԿԵԱՆ, Հ., (աշխտ.), Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը, Ա., Երեւան 1986, 369:

22 ԱՌԱՔԵՆ ԴԱՎՐԻՋԵՅԻ, Գիրք պատմութեանց, գլ. 2.:

23 ՏԵՆ Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., Երեւան 2001, 92:

ՆԱԿԵՐՏ աւանն է (նաեւ քաղաք), որ գտնուում էր ոչ թէ Ուտիքում, այլ Արցախ աշխարհում»²⁴:

Յաւելենք, որ Հերակլի արշաւանքի մասին յիշատակութիւնն է թողել նաեւ Կաղանկատուացին «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի Բ. գրքի Ժ. գլխում»²⁵, ըստ որի՝ Հերակլը ասպատակեց «Ատրպատականի կողմերը մինչեւ այն տեղը, որ կոչուում է Գայշ Աւան, ուր ամրոցներ կային եւ շոգ ամիսներին պարսից թագաւորների կողմից ընտրուած էր իբրեւ հովասուն ու առողջարար վայր եւ գտնուում էր Մարաստանի սահմաններում: Աւերում, քանդում ու գերեզմաններ է ամրոցը երկիրը եւ այնտեղից վերադառնալով կամենում է ձմեռել Աղուանքի, Վրաստանի ու Հայաստանի կողմերում»²⁶: Ապա շարունակութեան մէջ Կաղանկատուացին աւելի յստակ նշում է, որ Հերակլի զօրքը հասաւ ու «քանակեց Ուտի գաւառում, Կաղանկատու գիւղի սահմաններում գտնուող հեղեղատի մօտ, տրորեց, քանդեց այն այգիների ու գիւղերի բերքերը, որտեղից անցաւ: Այնտեղից մեկնելով քանակեցին Տրտուի հեղեղատին մօտիկ, որ Դիւտական գիւղի մօտ է»²⁷:

Յիշատակուած Տրտուն Արցախի Թարթառ գետն է, Դիւտականը՝ Թարթառի ափին գտնուող մի գիւղ»²⁸, որտեղ բանակել էր Հերակլի զօրքը, երբ «սրանց յետեւից եկաւ-հասաւ պարսից զօրքը, որին կոչուում էին նոր զօրք: Այս զօրքի զօրապետն էր Շահ-րապաղականը: Թագաւորին հաւատարիմ նախարարներից նրանց մէջ կար վերակացու եւ հրամանատար մի մարդ, որին Գրանիկ սաղար էին անուանում, սա եկաւ, իջաւ ընդդէմ Հերակլի. իսկ պարսից

24 Ա.Աղ:

25 Մովսէս Կաղանկատուացու Պատմութեան Բ. գրքի Թ.-ԺԴ. և ԺԶ. գլուխները, այդ թւում՝ այս հատուածը Ա. Յակոբեանը տպագրել է «Մատենանոցի Հայոց»ի Դ. հատորում՝ որպէս Անանուն Կաղանկատուացու գիրքի, իսկ ԺԵ. գլուխը՝ որպէս Վիրոյ կաթողիկոսի ֆառ (տե՛ս Մատենանոցի Հայոց, Դ., Անթիլիաս-Լիբանան 2005, 361-414:

26 ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ, Պատմութիւն Աղուանից աշխարհի, թարգմանութիւնը, առաջարանը եւ ծանօթագրութիւնները Վարազ Առաքելեանի, 100:

27 Ա.Աղ, 101:

28 Տե՛ս Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների քառարան, Բ., Երեւան 1988, 129:

միւս գորավարը եկաւ Հոռմից: Հերակլէսին ետ դարձրին եւ ֆշեցին (Սիւնեաց) երկրով»²⁹:

Կաղանկատուացու այս վկայութիւնը գալիս է յստակ պընդելու, որ Հերակլի գորքը բանակել էր Թարթառ գետի ափին:

Ուստի առաւել քան պարզ է, որ Սերէոսի յիշատակած Տիգրանակերտ աւանը հէնց Արցախի Տիգրանակերտն է՝ Վանքասարի ստորոտին, որի աւերակները գտնուում են Շահբուլաղ աղբիւրի (Արքաների աղբիւր) հարեւանութեամբ. այն յայտնաբերուել է դեռեւս 2005 թուականին, այժմ այնտեղ գործում է Տիգրանակերտի թանգարանը: Այս Տիգրանակերտում 2006ից սկսած կատարուում են պեղումներ, եւ այդ մասին արդէն իսկ ստեղծուել է հարուստ մասնագիտական գրականութիւն»³⁰:

Իսկ Սերէոսի յիշատակած «միւս Տիգրանակերտ»ն Ուտիք աշխարհում է, որի տեղագրութիւնն առայժմ անյայտ է, սակայն յստակ է, որ այն գտնուում է Գարդմանքում, քանի որ Սերէոսը գրում է, թէ պարսից գորավարը «Այրարատով գալիս է դէպի Գարդմանք՝ միւս Տիգրանակերտ եւ փակում Հերակլի գորքի քանակարհը, որ բանակած էր Փայտկարանում»: Ուստի «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան»ում Ուտիքի Տիգրանակերտի տակ բացարձակապէս աւելորդ է վերը յղուած հետեւեալ նախադասութիւնը. «Հաւանաբար նոյն ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ աւանն է (նաեւ քաղաք), որ գտնուում էր ոչ թէ Ուտիքում, այլ Արցախ աշխարհում»:

Եզրակացնելով՝ Սերէոսի Պատմութեան արեւելահայերէն թարգմանութեան Տիգրանակերտի մասին 257 ծանօթագրութիւնը շարադրուած է ոչ ճիշտ: Յիշատակուած Տիգրանակերտը

29 Անդ, 101-102:

30 Տե՛ս ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ. – ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Լ., Մշակութային հետազոտութիւններն Արցախում: Շուշի, Հանդարերդի վանք, Տիգրանակերտ, Երեւան 2009, նաեւ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Հ. – ԺԱՄԿՈՉԵԱՆ, Ա., Հայերէն արձանագրութիւններով սկաւտակ Արցախի Տիգրանակերտից (նախնական հաղորդում), ի Պատմա-բանասիրական հանդէս, 2009, թիւ 1, 166-176, նաեւ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ, Լ., Արցախի Տիգրանակերտի եկեղեցու նարտարապետութիւնը, ի Պատմա-բանասիրական հանդէս, 2016, թիւ 1, 115-140, նաեւ ՅՈՎՍԷՓԵԱՆ, Ռ., Դիտարկումներ Արցախի Տիգրանակերտի այգեգործական մշակոյթի մասին (X-XIII դդ.), ի Պատմա-բանասիրական հանդէս, 2017, թիւ 1, 103-115 եւ այլն:

կապ չունի ծանօթագրութեան մէջ ներկայացուած Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտի հետ, որ գտնւում է Մեծ Հայքի հարաւում՝ Աղձնիքում: Սեբէոսի յիշատակած Տիգրանակերտ անուն ակնյայտօրէն Արցախի Տիգրանակերտն է, իսկ «միւս Տիգրանակերտը»՝ Ուտիքի: Հայ մատենագրութեան մէջ Սեբէոսի այս վկայութիւնը բացառիկ հնարաւորութիւն է տալիս յստակ փաստել, որ Արցախում եւ Ուտիքում եղել են Տիգրանակերտ անունով բնակավայրեր:

ՎԱՆՈՅ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ

Summary**ACCURATE DEFINITION OF "TIGRANAKERT"
MENTIONED IN THE "HISTORY" BY SEBEOS****VANO YEGHIAZARYAN**

In the Eastern Armenian translation of "History" by Sebeos the 257-th commentary about Tigranakert was erroneously made as far as the mentioned Tigranakert had nothing to do with the Capital City Tigranakert located in Aghdznik. The settlement of Tigranakert mentioned by Sebeos is the very city of Tigranakert in Artsakh, whereas the other one is in Utik.